

Հակայ, Համամայ, Բարադի, Եփրեմի, Ոսկերե-
րանի, Գրիգոր աստուածարանի, Իգնատիոսի,
Կիւրդի, Յովհաննու Հայրապետի, Պարսամայ,
Տարազոսեանց, Եւստափոսեանց, Երկուց
Բիւրուց, Աղջուց սուրբ Ստեփաննոսի, Ստե-
փաննոսի Ուշեցու, Յովհաննու առաքելոյն և
Սաննու, Կիւրդայոսի Հայրապետի, Կիրակո-
սի և Յուզիտեայ—«Վարդազդն վառեալ», և
«Յայս յարկ նուիրանաց» քան և մի հաս-
ժի և ժԳ-րդ զարերում գրուած զեղեցիկ
Մանուկներէ վերայ:

ՍՆԸԿՎ Ա. ԱՄԵՏՈՒՆԵՒ.

(Հարունակելի :



Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Գ Ա Ր Տ Է Զ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆ.

ԸՆԳՂՈՒՆՈՒՐ ՅԱՌԱՋԱՐԱՆՆԵՐ:



րէօրէլեան մանկական
պարտէզը սովորական
ուսումնարաններէ նման
մի ուսումնարան չէ, ուր
երեխաներ ընդունելուց
յետոյ, իսկոյն սկսում են
սովորցնել գրել: կարգալ

և դրանից յետոյ զիտուծիւններ աւանդել: Դա
մի այնպիսի ուսումնարան է, ուր ընդունելով
չորս տարեկան մանուկին, ամենից առաջ սկը-
սում են համահասար զարգացնել նրա բո-
լոր ընդունակութիւնները առանց մի որ և է
ձանձրութիւն պատճառելու նրան և տալիս են
նրա հասակին համապատասխան ամենայն տե-
սակ նպատակադրմար զուսուծութիւններ:

Մարմնամարզութիւնը գլխաւոր առարկա-
ներից մէկն է, որ կատարուում է զանազան
զուարճալի բայց կանոնաւորուած խաղերով:
Խաղը մեծ դեր է կատարում մանկական պար-
տիզում, որովհետեւ խաղը և առհասարակ շար-
ժողութիւնը երեխայի համար բնական պա-

հանջներ են, որոնցից նրան չի կարելի զրկել:
այլ նաև պէտք է օգնել նրան խաղալու և
շարժողութիւններ անելու համար: Մանկական
պարտիզի խաղերը և շարժողութիւնները բոլոր-
ըն էլ յարմարեցրած են երեխայի մարմնի
և նրա զանազան ընդունակութիւնների զար-
գացման համար:

Խաղը երեխայի համար բնական պահանջ
է, որովհետեւ նա խաղալով աշխատում է իր
թոյլ մարմինն ամրացնել և շարժողութեանց
մէջ փորձուել: Կոյն ձգտումն էլ ունին բո-
լոր անասունների մատաղահաս ձագերը:

Մանկական պարտէզը խաղերով, երգերով,
փոքրիկ և զուարճալի պատմութիւններով ե-
րեխաների համար զիւրրմբունելի հետաքրքիր
եղանակներով ծանօթացնում է նրանց զանա-
զան զիտուծիւնների հետ, սովորցնում է կա-
նոնաւոր խօսելու, պատմելու ձևերը, կանոնա-
ւորում է և ուղղութիւն է տալիս նրանց ձրգ-
տումներին և բնագլմանցը (որոնք յաճախ բը-
նականապէս լինում են վայրենաբարոյ, որոնք
կարող են յետոյ հասարակութեան համար վը-
նասակալ լինել), սովորցնում է իրազնու-
թեան, աշխատասիրութեան, ինքնուրոյնու-
թեան, հնարագիտութեան, կարգապահու-
թեան:

Կրօնը առաջին տեղն է բռնում այդ ու-
սումնարանում: Բոլոր զիտնական մանկավարժ-
ները, որոնք Ֆրէօրէլից առաջ աշխատել են
մանկական պարտիզի իրագործման համար և
ինքը Ֆրէօրէլը միաձայն պնդում են, որ ան-
հրաժեշտ է հէնց սկզբից ներմուծել մանուկ-
ների հոգու մէջ աստուածային օրէնքները
կրթել նրանց այդ օրէնքներին համաձայն:
Այդ նպատակին հասնելու համար մանուկնե-
րին ծանօթացնում են բնութեան և դրա օ-
րէնքների հետ, որոնք նախասահմանուած են
Աստուծուց, ինչպէս և ինքը մանուկը, ստեղծ-
ուած է Աստուծուց: Ո՛նչ մարդկային լեզու
կարող է այն անսակ ակներև և հասկանալի
կերպիւ բացատրել Աստուծոյ զոյութիւնն,
էութիւնը, մեծութիւնը, մշտնջենաւորութիւ-
նը՝ քան ինքը բնութիւնը, որ Աստուած է

ասեղծել: Ճանօթանալով բնութեան հետ՝ մարդս ինքը տեսնում է, որ ամեն ինչ ենթարկուած է բնական խիստ որոշ օրէնքներին որոնցից շեղուողն անպատիժ չի կարող մնալ: Ահա այդ օրէնքներն են, որոնց անուանում են աստուածային օրէնքներ: Արանց հետ ծանօթացնում են մանուկներին մանկական պարտիզում բնութեան մասին տեղեկութիւն տալու և աստուածագաշտութեան համար որ մարդուս զիտաւոր և միայնակ ղեկավարն է, որովհետեւ ամեն բանի սկիզբն է ինքն Աստուած:

Հատերը կարծում են, որ մանկական պարտիզում չեն սովորցնում զրել և կարգալ: Այդ կարծիքը սխալ է: Գրել—կարգալը միացրած է զճագրութեան և նկարչութեան հետ, որոնք երեխաների համար մի բնական ձգտումներ են, որոնց նա ուսումնասիրում է սկզբում որպէս նկարչութիւն, որպիսի աշարկան նա սիրում է և վերջապէս ինքը տեսնում է, որ առանց մի զգալի աշխատութեան զիտ զրել և կարգալ:

Մտածեմատիքական գիտութիւնները մեծ տեղ են բռնում մանկական պարտիզի դասընթացքում: Այդ գիտութիւնները սովորցնում են զանազան տեսակ խաղալիքներով:

Մանկական պարտիզի բոլոր զբաղմունքներն այնպիսի ընտրողութեամբ են կատարուած, որ զարգացնում են մանուկների բոլոր ընդունակութիւնները, զգայարանները, մարմինը սովորցնում են իրազննութեան, աշխատասիրութեան, բարոյականութեան, ինքնուրոյնութեան, ինքնաձանաչութեան, աստուածագաշտութեան, որպէս զի մանուկները ժամանակին կարողանան պիտանի անդամներ լինել հասարակութեան համար:

Արթութեան նպատակն է զարգացնել երեխայի Ֆիզիքական, բարոյական, մտաւոր, հոգեկան ընդունակութիւնները, նրա բնազդումները, որոնց սերմերը աստուածային օրէնքներին համաձայն ցանած են նրա մէջ: Արթութիւնը չի կարող տալ երեխային նոր ընդունակութիւններ, այլ կարող է միայն եղածը

զարգացնել և նրան կեանքի համար պիտանի զարձնել:

Կեանքի համար երեխային հարկաւոր կը վնեն նրա բոլոր ոյժերը, որոնց նա պէտք է կարողանայ կանոնաւոր կերպիւ զործադրել իւր և հասարակութեան բարօրութեան համար: Այժմ ոյժերից մէկն անդարգացած մնայ, նա կեանքի մէջ պակասութիւն կզգայ, նրան կը թուի որպէս թէ նա իւր կարեւոր անդամների մէկից զրկուած է: Աւրեմն ոյժերի և ընդունակութիւնների համահաւասար զարգացումն անհրաժեշտ է, զրա համար էլ պէտք զարգացնել երեխայի Ֆիզիքական, մտաւոր, բարոյական, հոգեկան ոյժերը համահաւասար կերպով:

Երեխան չի ծնուել միայն գիտութիւն ձեռք բերելու համար, այլ զործելու և աշխատելու: Այս առաջ պէտք է զաղափարների հետ ընտելանայ և յետոյ զրանց զործադրի: Մի կրթութիւն, որ երեխային չէ սովորցնում մտածելու, աշխատելու, մտաւոր կեանք վարելու, կատարեալ ապարդիւն է:

Ճանաչել պէտք է ամեն ինչ, որ կայ տիեզերքում և երկրագնդի վերայ, այն է՝ իրեր, էակներ, ձևեր, օրէնքներ և զրանց յարաբերութիւնները, բնութիւնը, և այլն: Այս բոլորը ձանաչելու համար երկու միջոց ունինք, այն է՝ դասախօսութիւնը և իրազննութիւնը: Այժմ մարդուս համար զրանք են միայնակ միջոցները, երեխաների համար էլ նոյնն է մընում, միայն զանազանութիւնը նրանումն է՝ որ երեխայի ըմբռնելու ոյժերն աւելի նուազ են, որոնց պէտք է հէնց այդ միջոցներով և զյիտաւորապէս իրազննութեամբ զարգացնել, ամրացնել: Առաջ պէտք է սովորցնել մտածելու և յետոյ քննելու, զննելու եղանակը: Այդ կերպիւ ոչ միայն կարող ենք ուղղութիւն տալ երեխային, այլ և այն աստիճանին հասցնել, որ նա կարող լինի ժամանակով ինքը նոր տեղեկութիւններ ձեռք բերել, սովորել ինքնազործունէութեան:

Իրազննութիւնը կրթում է, կատարելագործում է երեխայի ընդունակութիւնները, սո-

վորցնում է տեսնելու, քննելու, համեմատելու, բաղադրելու և այդ բոլորը ընդհանրացնելու:

Մտածել նշանակում է մտքեր համեմատել, կցել, դադափարներ համեմատելով՝ ստեղծել նոր դադափարներ և ուղիղ եզրակացութեանց հասնել: Մտածելով ընդունակութիւնները զարգանում են ինչպէս և բոլոր այլ ընդունակութիւնները փորձով: Այդ պատճառով էլ պէտք է երեխային սովորցնել քննութեան, զննութեան, որպէս զի ինքը կարողանայ ամէն բանի պատճառը որոնել, գտնել: Պէտք է երեխային իրականից ուղեորել դէպի գաղափարականը և անհատականից դէպի ընդհանուրը: Պէտք է նրա դատողութիւնը հիմնուած լինի դրական փաստերի վրայ, ուրեմն իրական և դրական փաստերը պէտք է դատողութեան հիմքը կազմեն, որ զարգացման ամենաուղիղ և բնական ճանապարհն է: Այս տեսակ ուսումնասիրութիւնն ամենահեշտն է, որովհետեւ նա բնական է, և այդ է պատճառը, որ հետաքրքրում է երեխային, թարմացնում և մարդում է նրա ընդունակութիւնները:

Արդ տեսնենք անձինք, որոնք զարհուրելով կասեն, այդքան բան սովորցնել երեխային, շատ է: Իրանց կարելի է պատասխանել, աշխատութիւնները փոփոխել չի նշանակի ծանրաբեռնել: Այդ կախուած է վարժուհու հրմտութիւնից: Ամենազուարճալի զբաղմունքը կարող է ծանրաբեռնել երեխային, եթէ նա չը փոփոխուի: Ամենազուարճալի խաղը չի կարելի խաղալ մի երկու ժամ շարունակ: Ամեն մի զբաղմունք փոփոխելով դառնում է դիւրամբռնելի, հետաքրքրի, զուարճալի:

Ինչ որ սովորցնում են մանուկին մանկական պարտիզում՝ պէտք է սովորցնել ցուցական եղանակով, այսինքն ամեն բան ցոյց տալով, բացատրելով, լուծելով, կրկին միացնելով: Յուշական եղանակի համար բնական զիտութիւնները տալիս են մեծ պաշար:

Պատմութիւնը չէ կարելի սովորցնել այն եղանակով, որ ընդունուած է, որովհետեւ երեխայի յիշողութիւնը կը ծանրաբեռնուի անցեալ փաստերով: Պէտք է երեխային հասցնել

որոշ զարգացման և երբ նա ընտելացած լինի այժմեան հասարակութիւնների գրութեանն, այն ժամանակ կարելի է անցեալի մասին խօսել նրա հետ: Անցեալը թողել է հետքեր, սովորութիւններ, արհեստներ, արձաններ, հրնութիւններ: Համեմատելով դրանց պատկերները կարելի է պատմութեան մասին իսկ գաղափար տալ երեխային:

Մանկական պարտիզի պարագմունքները երբէք ձանձրալի չեն կարող լինել երեխայի համար, որովհետեւ ամեն մի դաս, որ տեւում է 15 րոպէ, որից յետոյ, խաղը, մարշը կամ մարմնամարզութիւնը երգեցողութեամբ է կատարվում որ նոյնպէս մօտաւորապէս 15 րոպէ է տեւում՝ թարմացնում ամրացնում զուարճացնում է նրան:

Իրեօրէյը նայում է երեխայի վրայ որպէս մի բոյսի վրայ, որին պէտք է խնամել, միջոց տալ զարգանալու: Մա դառնում է երեխային բնութեան մէջ, շրջապատում է նրան բնութեան զարդերով, այն է՝ ծաղիկներով, ծառերով, կանաչով, ուր նրա երեսին ամեն ինչ ժպտում է, ուր նա կարող է ազատութեամբ զարգացնել իւր բաղմնախորմանի ընդունակութիւնները:

Մեր հայ երեխաները անպատրաստ, առանց սկզբնական զարգացման մտնում են ուսումնարան և միայն առանձին ընդունակութեանց շնորհիւ և մեծ դժուարութեամբ են կարողանում դասընթացքին հետևել: Շատերը նաև աշխատութեան սովոր չեն և հասարակ բաներ ըմբռնել չեն կարողանում, որովհետեւ ուսումնարանը ենթադրում է մի որոշ աստիճանի զարգացում, որ մեր երեխան չունի:

Ծնողները միշտ անբաւական են, երբ նրանց որդիքը չեն կարողանում մտնել ուսումնարան, որովհետեւ ապարդիւն են անցրել իրենց 4—8 տարիները: Շատ անգամ էլ մտնում են ուսումնարան բարեկամութեան, անվերջ խընդիրքների և աղաչանքների շնորհիւ: Այդպէս երեխաները մտնելով ուսումնարան անբաղութեան են մատնուում, որովհետեւ դրանց համար ուսումնարանը դառնում է տանջանա-

րան այն պատճառով որ անպատրաստ են դասերին հետեւելու: Գրա հետեւանքը լինում է ծուլութիւն մարմնին տկարութիւն և վերջապէս այդպիսիները տարիներ շարունակ մնալով ուսումնարանում չեն կարողանում վերջացնել: Ծնողներն այդ անյաջողութիւնը վերագրում են երեխայի ծուլութեանը, այն ինչ պէտք է վերագրելին սկզբնական անպատրաստականութեանը որ ուսումնարանում ուղղելը կամ պակասը լրացնելը անկարելի է լինում:

Պէտք է զիտենալ որ ամեն մի ուսումնարան հիմնուած է ոչ առանձին գեղեցիկ ընդունակութիւն ունեցողների համար, այլ միջակ ընդունակութիւնների համար, այդ պատճառով այդ վերջինները պէտք է հեշտութեամբ կարողանան վերջացնել իրենց ուսումնայն ինչ կարողանում են վերջացնել միայն առանձին լաւ ընդունակութիւն ունեցողները պատճառն այն է, որ նախապատրաստուած չեն դասերին հետեւելու:

Աստիցս պարզ երևում է թէ որքան կարեւոր է սկզբնական կրթութիւնը զարգացումը, նախապատրաստութիւնը որպէս զի ամբողջ տարիների մտաւոր աշխատանքը երիտասարդի համար իզուր անցած չը լինի: Այդ նախապատրաստութիւնը հեշտ ձևով տալիս է մանկական պարտէզը 4—8 տարեկան հասակում:

Մէկ մարդ չի կարող մշակել մի ամբողջ գիտութիւն, կրթութեան մի ամբողջ եղանակ, ինչպէս մանկական պարտիզի եղանակն է: Ամեն մի գիտնական եղանակի զարգացման մէջ աշխատում են շատ անձինք: Վերջին անձինք օգտուում են առաջընթացների գիտութիւնից, հմտութիւնից, զարգափարներից, դրանց վրայ էլ աւելացնում են իրենց գիտեցածը և այդ կերպիւ գիտութիւնը, եղանակը կազմակերպուում է:

Ֆրէօբէլի մանկավարժական վարդապետութիւնը միայն նրա գործը չէ, այլ առաջընթաց նշանաւոր գիտնական մանկավարժների աշխատանքն էլ է զետեղուած նրա վարդապետութեան մէջ:

Ի հարկէ կարելի է ընդունել մի հակամանկավարժական եղանակ (մէդոլ) վստահութեամբ առանց ուսումնասիրելու շարժառիթները առանց տեսնելու թէ այդ եղանակն ինչպէս է հետզհետէ կազմակերպուել, բայց աւելի լաւ է դոնեա համառօտ տեղեկութիւն ունենալ եղանակի կազմակերպութեան ընթացքի մասին:

Այն անձինք, որոնք նորագոյն քաղաքակրթութեան ընթացքում առաջարկել են գործնական դաստիարակութեան սկզբունքների, կարելի է ասել, որ դրանցից առաջին սկզբունք տուողն եղել է Ֆրանսիացի Մօնտէյն փիլիսոփան, որին պատմաբաններն անուանում են հայր նորագոյն մանկավարժութեան:

Մանկական պարտէզն ամենակարեւոր ուսումնարանն է մարդու համար, որովհետեւ այդ տեղ է, որ երեխան ստանում է իւր սկզբնական կրթութիւնը և զարգացումը, ուր ապագայ կեանքի և գործունեութեան համար հաստատ հիւք է դրուում:

Ֆրէօբէլը սկզբնական կրթութիւնը յանձնում է մայրերին և այդ կրթութեան եղանակն անուանում է «*Տյըբլէ ֆլյուրի-*»: Ֆրէօբէլն առաջարկում է ամեն մի գերդաստուն մանկատն պարտէզ դարձնել: Արդէս զի երեխաներն կրթութիւն իրենց նմանների հասարակութեան մէջ: Ֆրէօբէլն առաջարկում է ծանօթներից վերցնել այնքան հասակակից երեխաներ, որ նրանց թիւն հասնի առնուազն 4—6-ի: Աստիցս հետեւում է, որ ամեն մի օրիորդ ուսման ժամանակ պէտք է ուսումնասիրի մանկական պարտէզը, որպէս զի կարող լինի իւր ապագայ զաւակներին տալ սկզբնական կրթութիւն և զարգացում ու դրանով կանոնաւորուի իւր զաւակների կեանքն ու ապագան:

Չպէտք է մոռանալ, որ մայր լինել կը նշանակէ կրթիչ էլ լինել: Կրթութիւնն սկսում է իսկապէս երեխայի ծննդեան ընդմէջ: Ով որ հասկանայ այս երկու օրէնքների կարեւորութիւնը, նա անշուշտ ամուսնութիւնից առաջ պէտք է «*տեսնել*» մանկական պարտէզը:

Մի օրիորդաց ուսումնարան, ուր տեսակա-

նապէս և զործնականապէս չեն սովորցնում մանկական պարտիզի եղանակն այդպիսի օրիորդաց ուսումնարանը չէ կարող համապատասխանել իւր նպատակին: Ո՞ր աղջիկը կարող է կրթութեամբ համարուել որ ընդունակ չէ կրթութեւ իւր զաւակներին: Ո՞ր արհեստաւոր կարող է արհեստաւոր համարուել որ ընդունակ չէ իւր արհեստն ուրիշին էլ սովորցնելու:

Որպէս զի ամեն մի օրիորդ կարող լինի ուսումնասիրել մանկական պարտիզը պէտք է որ ամեն մի օրիորդաց ուսումնարանի նախապատրաստական դասատուները մանկական պարտիզ լինին այն ժամանակ փոքրիկ աղջիկն անձամբ կրթութեամբ մանկական պարտիզում և յետոյ վերջին դասարանում անցնելով մանկական պարտիզի տեսական մասը և վերջապէս զործնականապէս դասատուութեամբ պարապելով իրենց ուսումնարանի մանկական պարտիզում նա մեծ հեշտութեամբ ձեռք բերած կը լինի այդ «*հայրերի ֆիլսոֆիան*» որ ամենակարեւոր գիտութիւնն է նրա համար: Ուրեմն այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է մեր օրիորդաց ուսումնարանների ի բնէ կրթութեան անհամապատասխան նախապատրաստական դասարանները փոխել մանկական պարտիզներին որ մի շատ հեշտ զործ է: Եթէ սկսելու համար ամեն մի օրիորդաց ուսումնարանի համար մէկ մանկական պարտիզականուհի պատրաստած լինինք: Այդ զործին կարող են ձեռնարկել թիֆլիսում տիկին Սօփիա Բաշայեանցը որ հմուտ է այդ զործին իսկ Կ. Պօլսում տիկին Գայիանէ Մատակեանցը որ այդ զործն երկար տարիներ ուսումնասիրում է: Ունենալով այդ երկու կենդրոնը՝ կարճ միջոցում կը տարածուի մանկական պարտիզի եղանակը և մեր օրիորդաց ուսումնարանները հասած կը լինին իրենց այդ կարեւոր նպատակին:

Մանկական պարտիզն ես ուսումնասիրեցի արտասահմանում իմ երեխաների համար բայց հասկանալով զրա կարեւորութիւնը մեր մանուկների համար՝ աշխատեցի զրեւ մանկական պարտիզի տեսական մասը ձեռքիս տակ

ունենալով բարօնուհի Բէրտա Մարէն Ֆօլց— Բիւլօյի Առգուստ Կէօլերի Գլըօնի գիրքը և լսածս դասախօսութիւնները:

Մանկական պարտիզի այս առաջին մասը պարունակում է տեսական բաժինը: Սկզբում զետեղել եմ պատմական մասը որ շատ կարեւոր է որպէս զի իմանան թէ ինչ գիտնականներ են աշխատել մանկական պարտիզի իրագործման համար և իւրաքանչիւրն ի՞նչ զաղափարներ է յայտնել: Պատմական տեսութեանը հետեւում է Ֆլըօրէլի կրթական վարդապետութիւնը:

Երկրորդ մասը կպարունակէ մանկական պարտիզի զործնական մասը այն է մաթեմատիկա և զեղարուեստ որ Ֆրանսիերէնից թարգմանում եմ: Այս զործնական մասը աշխատասիրել են տիկին և պարօն Գլըօն:

Մնացած դասագրքերը որոնք վերաբերում են բնագիտութեանց, երաժշտութեանը և ինչպէտք է թարգմանուին հետզհետէ:

(Շարունակելի)

ԲՏ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ.



ԳՊՐՈՅԱԿԱՆ ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ.

(Սահմանուած Էդլանդական Ազգային լուսարուութեան Նախարարութիւնից):



ազայի Ազգային լուսարուութեան նախարար՝ բժշկապետ J. Th. Mouton - ի կարգադրութեամբ նորերս բոլոր քաղաքային դպրոցներին ուղարկուած է

հետեւեալ առողջապահական պատուէրները որը կազմել են N. J. Bouvin, C. J. Z. Feith, J. H. M. Gerards, և J. G. J. von Oppenraah բժշկապետները: